



**ԴԱՏԱԽԱԶԻՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ 1. Դատախազության՝ սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պաշտոններում պաշտոնի է նշանակում գլխավոր դատախազը սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց թվից տվյալ պաշտոնում նշանակվելու համար որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում:

2. Դատախազության՝ սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով սահմանված պաշտոններում պաշտոնի է նշանակում գլխավոր դատախազը համապատասխանաբար սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց թվից:

3. Դատախազության՝ սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված պաշտոններում պաշտոնի է նշանակում գլխավոր դատախազը դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված այն անձանց թվից, որոնք ավարտել են համապատասխան ուսումնառությունը արդարադատության ակադեմիայում կամ սույն օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասի հիման վրա ազատված են եղել արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից:

Օրենքի վկայակոչված հոդվածի եւ համապատասխան կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատախազության համակարգում նշանակումների հիմնական պատասխանատուն եւ էական դերակատարում ունեցող անձը գլխավոր դատախազն է: Վերջինս որոշման հիմքում ընկած են առաջխաղացման ցուցակները:

Առաջխաղացման ցուցակները կազմվում են ՀՀ Արդարադատության ակադեմիայում ուսուցման արդյունքների ամփոփման ավարտին եւ հիման վրա:

«Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասի 26 համաձայն՝ «Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում, հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում, քննիչների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձը համարվում է մասնագիտական պատրաստումն անցած, եթե նա առարկայական կուրսերից բոլոր քննությունների արդյունքներով ստացել է դրական գնահատական և դրական է գնահատվել փորձաշրջանի արդյունքներով»: Հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ «Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում, հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում, քննիչների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի՝ Ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորը հաշվարկվում է առարկայական կուրսերից հանձնած բոլոր քննությունների գնահատականների հիման վրա»:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի վերոնշյալ կետերը նախատեսում են՝  
-գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը, Երևան քաղաքի դատախազը, զինվորական դատախազի տեղակալը  
-գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար տեղակալը, Երևան քաղաքի դատախազի տեղակալ, Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը, մարզի դատախազը, կայազորի զինվորական դատախազը, գլխավոր դատախազության ավագ դատախազը



- գլխավոր դատախազության դատախազ, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ավագ դատախազներ և դատախազներ, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների տեղակալներ, մարզերի դատախազների տեղակալներ, Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազներ, կայազորների զինվորական դատախազների տեղակալներ, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ,

- Երևան քաղաքի դատախազության դատախազներ, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների ավագ դատախազներ և դատախազներ, զինվորական կենտրոնական դատախազության 27 կառուցվածքային ստորաբաժանման ավագ դատախազներ և դատախազներ, զինվորական կենտրոնական դատախազության դատախազ:

Ոչ «Դատախազության մասին», ոչ էլ «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքները ըստ էության լրացուցիչ չեն հստակեցնում, թե ինչ սկզբունքով եւ ընթացակարգով է տեղի ունենում ցուցակներից ընտրությունն ու նշանակումը, ինչ չափանիշի հիման վրա են ուսումնասիրությունն ստացած թեկնածուները նախապատվություն ստանում եւ նշանակվում գլխավոր դատախազի կողմից <sup>1</sup> : Այսինքն, հաստատված ցուցակներից թեկնածուի ընտրության ու դատախազի պաշտոնի նշանակման գործում գլխավոր դատախազին տրված է չափազանց մեծ հայեցողություն, ինչը կարող է հանգեցնել կոռուպցիոն ռիսկերի եւ մեծացնել նշանակումների եւ ըստ այդմ նաեւ համակարգի նկատմամբ անվստահության:

Նշված խնդիրն ու դատախազության համակարգում պաշտոնի նշանակման գործընթացը առավել վստահելի ու կանխատեսելի դարձնելու նպատակով *առաջարկվում է գործող կարգավորումներում կատարել լրացում եւ նախատեսել գլխավոր դատախազի կողմից ցուցակից թեկնածուի նշանակում՝ ըստ Արդարադատության ակադեմիայում կրթության եւ ավարտի հանրագումարային միավորների նվազման կարգի: Այսինքն, առաջնահերթությամբ պաշտոնի նշանակվում է առավել բարձր միավոր հավաքած թեկնածուն՝ ըստ հերթականության, իսկ հավասար միավորների պարագայում առաջնահերթությունը տրվում է ավելի երկար փորձառություն ունեցող թեկնածուին:*

**Հոդված 42. Դատախազին պաշտոնի նշանակելու կարգը**

1. Դատախազության՝ սույնօրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պաշտոններում պաշտոնի է նշանակում գլխավոր դատախազը սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց թվից տվյալ պաշտոնում նշանակվելու համար որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում՝ ըստ ուսումնասիրությունն ավարտելու հանրագումարային միավորների նվազման կարգի: Հավասար հանրագումարային միավորների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին<sup>2</sup>:

<sup>1</sup>  
<sup>2</sup>Առաջարկվող փոփոխությունը ընդգծված է:



2. Դատախազության՝ սույնօրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով սահմանված պաշտոններում պաշտոնի է նշանակում գլխավոր դատախազը համապատասխանաբար սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց թվից՝ **ըստ ուսումնառությունն ավարտելու հանրագումարային միավորների նվազման կարգի: Հավասար հանրագումարային միավորների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին:**

3. Դատախազության՝ սույնօրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված պաշտոններում պաշտոնի է նշանակում գլխավոր դատախազը դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված այն անձանց թվից, որոնք ավարտել են համապատասխան ուսումնառությունը արդարադատության ակադեմիայում կամ սույն օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասի հիման վրա ազատված են եղել արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից:

4. Սույն օրենքով սահմանված կարգով դատախազին, սույն օրենքի 37-րդ հոդվածով սահմանված աստիճանակարգությանը համապատասխան, նույն աստիճանի մեկ այլ պաշտոնում նշանակում կատարելու դեպքում դատախազը կրկին չի ընդգրկվում դատախազների թեկնածությունների կամ ծառայողական առաջխաղացման համապատասխան ցուցակներում:

5. Սույն հոդվածով սահմանված կարգավորումները չեն գործում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարի, ղեկավարի տեղակալի և դատախազների պաշտոններում նշանակման դեպքերում: Եթե անձը դատախազության համակարգում առաջին անգամ պաշտոնի է նշանակվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման կազմում, ապա չի կարող տեղափոխվել այլ ստորաբաժանում՝ առանց սույն օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգերի պահպանման:

*(42-րդ հոդվածը լրաց. 16.04.20 ՀՕ-245-Ն)*